

**Մատենական գեղանկարչության ուսուցման  
մեթոդական ցուցումներ**

*Լիլիթ Ամիրջանյան*

***Հանգուցային բառեր.** մանրանկարչության սկզբունքներ, գեղանկարչական գիտելիքներ, կատարողական տեխնիկա, գունազարդման արվեստ, գուներանգային անցումներ, գունային գամմա, վարժություններ, տեխնիկական-տեխնոլոգիական մեթոդներ*

**Նախաբան**

Հայտնի է, որ կերպարվեստի, առավել ևս մանրանկարչության արվեստի ուսուցման և կատարողական տեխնիկայի յուրացման լավագույն մեթոդը կրկնօրինակումն ու ստեղծագործական վերարտադրումն է: Կրկնօրինակման ճանապարհով էին յուրացվում անցյալի վարպետների (անտիկ, միջնադարյան և վերածննդի դարաշրջանների) փորձն ու հմտությունը, կատարողական տեխնիկան, հետագայում նաև ստեղծագործելու բարձր արվեստի հնարներն ու գաղտնիքները: Նկարելու տեխնիկայի ուսուցողական մեթոդներ էին ոչ միայն միջնադարյան վարպետների փորձառության ու գեղարվեստական գիտելիքների, կատարողական փորձի բանավոր փոխանցումը սերնդեսերունդ՝ հորից որդուն, ուսուցչից աշակերտին, այլև հիշատակարաններում, ուսուցողական մատյաններում նրանց կատարած գրառումները:

Այս ճանապարհով է մանրանկարչության արվեստը դարեդար շարունակվել՝ անցյալի վարպետներին կրկնօրինակելով, ինչպես նաև հին ավանդները, կանոններն ու օրենքները պահպանելով հանդերձ՝ ստեղծագործաբար նորը կերտելով, ինչի շնորհիվ էլ ապահովվել է այդ ավանդույթների պահպանումը, շարունակական, դինամիկ, ստեղծագործական զարգացումը V դարից մինչև XIX դարը:

**Մատենական գեղանկարչության ավանդական  
ուսուցման մեթոդները**

Չնայած մանրանկարչական տարբեր դպրոցների առանձնահատկությունների առկայությանը՝ հայկական միջնադարյան մանրանկարչության սկզբունքները, տեխնիկան, մեթոդները հիմնականում ընդհանուր են եղել պատմական Հայաստանի տարբեր շրջանների, գավառների, գրչակենտ-

րոնների, նույնիսկ գաղթօջախների համար և կրել են երկու հիմնական ուղղությունների ազդեցությունը՝ Վասպուրականի, որ ժողովրդական է համարվում, և Կիլիկիայի, որ պալատական կամ ազնվականական է կոչվում: «XIII դարից սկսած հաճախ առանձին մանրամասներ մեկ ուղղությունից անցնում էին մյուսին և այնտեղ էլ հաստատվում, մեծ մասամբ ոճը փոխելով, ըստ ժամանակի ու դպրոցի պահանջների» [2, 14]:

Ըստ վաղեմի ավանդության՝ շատ ներկերի և ոսկու պատրաստման տեխնիկան հաճախ գաղտնի էին պահում: Իսկ այդ դեղատոմսերը հին հայերենով՝ գրաբարով գրված լինելու պատճառով մնում էին անծանոթ ու անհասկանալի հարևան երկրների համար: «Ձեռագրերի և նրանց մեջ եղած նյութերի ուսումնասիրությունը կարևոր խնդիր է հանդիսանում: Եթե կուլտուրական աշխարհը անծանոթ է մնացել այդ աշխատանքների, պատճառն այն է, որ դրանք գրված են եղել գրաբար լեզվով, որ անհասկանալի է եղել ուրիշ երկրների ժողովուրդներին, որովհետև այն ժամանակ արևելքում տիրապետող գրական լեզուն արաբերենն էր» [3, 6]:

Որոշ մեթոդներ ընդհանուր էին այնպիսի երկրների համար, ինչպիսիք էին Սիրիան, Բաբելոնը, Եգիպտոսը, Բյուզանդիան և արաբական երկրները, որոնց հետ Հայաստանը տնտեսական-առևտրական ու մշակութային սերտ հարաբերություններ ուներ:

Միջնադարյան ձեռագրային արվեստի կատարողական տեխնիկայի վերաբերյալ գործնական, նկարչական եղանակների մասին որոշակի տեղեկություններ են հայտնում միջնադարի վարպետները, ուսուցիչներն իրենց գրած հիշատակարաններում, ուսուցողական մատյաններում: Դեռևս վաղ միջնադարում եղել են ուսուցողական տետրեր (օրինակ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի №1494/34 ձեռագիրը՝ «Պատկերուսույց» գիրքը), ինչպես նաև գաղափար-օրինակներ՝ ձեռագրերի նմուշներ՝ որպես կրկնօրինակման տեխնիկային տիրապետելու լավագույն, նախընտրելի օրինակներ, որոնցում ուսուցողական խրատների, պարզից դեպի բարդն ընթացող հանձնարարականների ձևով ուղղություն է տրվել, թե ինչպես պետք է կիրառել այն թեմատիկ պատկերների, զարդագրերի և զարդանախշերի ուրվանկարները, որոնք բովանդակել են այդ դասագրքերը: Այդպիսի ուսումնական ձեռագիր է եղել ՄՄ Ձեռ. 3433 Ավետարանը, որի թերթերի վրա նշված են վարպետի կատարած դիտողություններն ու խորհուրդները, ինչպես նաև աշակերտի նկարչական փորձերը [1, 68]: Բացի նշված ձեռնարկներից՝ նկարիչներն իրենց փորձի հիման վրա կազմել են ուսուցողական տետրեր, ինչպես,

օրինակ, Մահակ Ծաղկարարի «Տետրակ այս է ծաղկարան» ձեռագիր մատյանը՝ ՄՄ Ձեռ. 6248 (Նույն տեղում, էջ 69):

**Մանրանկարի գեղանկարչական վերարտադրման (կրկնօրինակման) տեխնիկական-տեխնոլոգիական միջոցներն ու մեթոդները:**

***Ջրաներկի չոր տեխնիկային բնորոշ տեխնիկական առանձնահատկությունները***

Դասական մանրանկարչությունը պահանջում է աշխատանք, որը կատարվում է չոր թղթի կամ մագաղաթի վրա՝ ջրաներկի չոր տեխնիկայով, որի առավելությունը ջրաներկի թաց տեխնիկայի համեմատ այն է, որ ջրաներկային յուրաքանչյուր գուններանգ, որ դրվում է պատկերի երանգավորման ընթացքում, չի սահում ու խառնվում մեկ այլ գուներանգի: Ջրաներկի չոր տեխնիկայի դեպքում նկարիչը կարող է կառավարել իր վրձնահարվածները այնպես, որ գույները չտարածվեն, չմիախառնվեն, չձուլվեն իրար, և յուրաքանչյուր կառուցակերպի (ֆիգուր), առարկայի գունային սահմանը հստակորեն ընդգծվի՝ նպաստելով պատկերվող հատվածի՝ իր գույնի մեջ առավել արտահայտիչ դրսևորվելուն:

Ջրաներկի չոր տեխնիկան թույլ է տալիս ստեղծել գույնի նրբերանգային աստիճանական անցումներ՝ վալյորային մշակումներ տվյալ կառուցակերպի, առարկայի, ձևի կաղապարման ընթացքում, ինչը հնարավոր չէ ջրաներկի թաց տեխնիկայի կիրառմամբ, քանի որ վերջինիս պարագայում առաջանում են նրբերանգների, ինչպես նաև ձևերի անցանկալի միաձուլում և խախտում, ուստի թաց տեխնիկան կիրառվում է ոչ թե դասական մանրանկարչության ոլորտում, այլ բնանկարի, նատյուրմորտի և կերպարվեստային տարբեր ժանրերում՝ կախված նկարչի գեղագիտական խնդիրներից, երբ անհրաժեշտ է որոշակի օդային, եթերային, ծավալային և այլ խնդիրներ լուծել:

**Մանրանկարի կրկնօրինակման մեթոդները:**

**Գունանկարի (երփնանկարի), գունաշարի ստեղծումն ու մշակումը**

***Ինչպե՞ս նկարել ջրաներկով, որպեսզի չկորսվեն և չխաթարվեն այս նյութին բնորոշ լավագույն որակական հատկությունները՝ գույնի թափանցիկությունն ու լուսավորությունը, հնչեղությունը, մաքրությունը, պայծառությունը:***

Ջրաներկի տեխնիկան, լինելով բազմաշերտ, ինչպես յուղաներկինը,

բավական դժվար ու բարդ խնդիրներ ունեցող տեխնիկա է, որին բնորոշ թափանցիկությունն ու պայծառությունը չկորցնելու համար նկարչից պահանջվում են մեծ ջանք, հմտություն, վարպետություն: Ջրաներկի տեխնիկայում շատ կարևոր է գույները դնել սկզբից ևեթ մաքուր, բարակ, նուր, թափանցիկ, բաց երանգի ներկաշերտով, ինչպես տեմպերայի տեխնիկայի դեպքում: Այն լույսը, որ գտնվում է սպիտակ թղթի կամ մագաղաթի մակերեսին, նկարի հիմքի՝ գծանկարի տակ, պետք է մինչև ամենավերին գունաշերտը չկորսվի, չմթազնի և երևա նույնիսկ բազմաշերտ ներկի տակից: Սա է ջրաներկի տեխնիկայի ողջ հմայքը, նրբագեղությունը, որ գույնը չկորցնի իր «հնչեղությունը», պայծառությունը:

Ջրաներկի տեխնիկայում լույսն անդրադարձվում է ոչ միայն ներքին հիմնաշերտերից, այլև վերնաշերտերից: Առարկաները, կառուցակերպները, նրանց դեմքերը և հագուստները լուսավորվում են մաքուր սպիտակ տեմպերայի կամ գուաշի վրձնահարվածներով՝ շեշտելով առարկայի այն հատվածները, որտեղից լույսն ավելի ինտենսիվորեն է անդրադարձվում: Մաքուր սպիտակ ներկը դրվում է ցանկալի հատվածներում ոչ միայն իբրև **նուր, թափանցիկ ներկաշերտ**, որը նրբացնում, մեղմացնում է տվյալ գույնը (**թափանցաներկում**), այլև որպես **թանձր, ամուր, խիտ գիծ**, որն ընդգծում է **լույսի արտահայտչականությունը**, կառուցակերպին, առարկային տալիս է **ծավալի տպավորություն**, ինչի շնորհիվ այն ձեռք է բերում իրական տեսք՝ **ռեալիստական մեկնաբանություն**:

Սովորելու ընթացքում սկզբից առաջադրում են կրկնօրինակել պարզագույն նմուշները, այնուհետև՝ աստիճանաբար ավելի բարդերը:

Մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացի գիտակից կառավարումը, սովորողների գեղանկարչական գիտելիքները, պատկերի զգայական ընկալումը և դրա գեղարվեստական հստակ ու պարզ վերարտադրումը, արվեստի լեզվի արտահայտչական և կատարողական միջոցներին տիրապետելը, նաև գեղարվեստական ազատ մտածողությունը, նորարարությունն ու երևակայությունը, գյուտարարությունը, ներշնչանքն ու ինտուիցիան, մեկը մյուսի հետ միահյուսված, մանրանկարի գեղանկարչական վերարտադրման՝ կրկնօրինակման արվեստի ստեղծագործական, տեխնիկական-տեխնոլոգիական միջոցներն ու մեթոդներն են:

Մատենական գեղանկարչության ուսուցման խնդիրը թղթի երկչափ մակերեսին առարկաների, կերպարների տեսանելի, գունային երևույթների ու դրսևորումների, ծավալների գունային արտահայտիչ, ներդաշնակ համադրումների ու ամբողջականության՝ գունային զամմայի պատ-

կերումն է, որը, արտահայտելով կերպարների հիմնական ծավալային և գունաստեղծման կարևորագույն տարրերը, իր ողջ ուժգնությամբ պետք է ընդգծի կերպարների գլխավոր հատկանիշերը, շարժումները, ռիթմը, պատկերի հիմնական գաղափարական, գեղարվեստական իմաստը:

Մատենական գեղանկարչության կատարողական տեխնիկային լավագույնս տիրապետելու չափանիշը արտահայտիչ գույն, գունային նրբերանգներ ստեղծելու, գույնով և գունային նրբերանգներով լույս ու ստվերային խնդիրներ լուծելու կարողություններն ու հմտություններն են:

Մատենական գեղանկարչության արվեստում ուսանողների ու սկսնակների գեղանկարչական առաջին փորձերում նկատելի է գույն պատրաստելու անփորձությունը՝ անկարողությունը, որը դրսևորվում է ներկը, առանց նրանից խառնուրդային գույն պատրաստելու, թղթի մակերեսին իբրև արդեն պատրաստի «գույն» տեղադրելում ու բաշխելում: Ներկն ինքնին գեղարվեստական արժեք ու գույն չէ, քանի դեռ այն չի համակցվել, միավորվել այլ գույնի ներկերին ու խառնվելով չի դարձել համապատասխան, ցանկալի գույնը, որով դրսևորվելու է տվյալ կերպարը: Ուստի ներկն ու գույնը տարբեր հասկացություններ են, և պարզապես ներկերով թուղթը պատելը նույնն է թե ներկարարությամբ զբաղվել, իսկ հատկապես մատենական գեղանկարչության արվեստում սա անթույլատրելի է և ապարդյուն աշխատանք: Սկսնակ ուսանողների վերը նշված թերացման պատճառը գունագարդման արվեստին, գույներն իրենց նրբերանգներով պատրաստելու տեխնիկային չտիրապետելն է:

Մանրանկարչական գեղագարդման արվեստում ուսանողների հիմնական սխալի՝ պատկերը սկզբից նեթ ամենամուգ, ավարտուն գունային տոնայնությամբ ծածկելու հետևանքով նկարի ներքին՝ հիմնաշերտային թափանցիկ, բաց գուններանգները բացակայում են, առկա չի լինում գունային տոնայնության աստիճանական զարգացումը՝ վայրային մշակումը, գույները չեն հնչում, դրանք խլացած, ծանր ու պղտոր են լինում: Ուստի կարևոր է, որ մանրանկարչության տեխնիկայում սկզբից նեթ դրվեն գույների ամենաբաց երանգները՝ տոները, իսկ միջին և մուգ երանգները դրանից հետո, որպեսզի ձեռք բերվի գունային հարուստ, վայրային, ջրեղ հնչեղություն ու արտահայտություն:

Տիրապետել գեղագարդման կամ գեղանկարչության արվեստին նշանակում է տիրապետել գույն կերտելու կարողությանն ու հմտությանը՝ գույների նրբերանգներ և դրանց ելևէջային անցումներն ու գունաշերտերը կառուցել կարողանալ, այդ նրբերանգներով լույսուստվերային ու

ծավալային խնդիրներ լուծել, գեղանկարչական արժեք, վալյորային հարստություն ստեղծել:

### **Եզրակացություն**

Մատենական գեղանկարչության արվեստում սկսնակների և ուսանողների վերոնշյալ թերացումները շտկելու, գույն և գուներանգ պատրաստելու կարողություններ և կատարողական հմտություններ ձևավորելու ու զարգացնելու համար առաջարկում ենք ուսուցման հետևյալ արդյունավետ մեթոդները:

- Մշտապես կատարել գունային ամենատարբեր ելնեջների ստեղծման գործնական վարժություններ ու փորձեր, գեղանկարչական էտյուդներ, ստեղծագործական բազմաբնույթ առաջադրանքներ ինչպես լսարանում, այնպես էլ լսարանից դուրս, բացօթյա՝ բակում, այգում, տնամերձ հողամասում, պլեյներային՝ բնության գրկում՝ բնանկարային, դիմանկարային, գունանկարային փորձերով, վերարտադրումներով, ինչպես նաև տանը՝ ինքնանկար, մտերիմների, ծանոթների, անծանոթների դիմանկարներ ու նատյուրմորտներ նկարելով և շատ կրկնօրինակությունների գունազարդման վարժություններ կատարելով:

- Ուսուցման գործընթացում գեղանկարչական ինքնուրույն, ինչպես նաև մանկավարժի օժանդակությամբ, ցուցադրությամբ ու բացատրությամբ կատարվող գործնական վարժությունները՝ գեղանկարչական տեսական գիտելիքների կիրառմամբ, նպաստում են գույնն զգալու, տեսնելու, վերարտադրելու և պատկերելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը:

- Խնդրահարույց, որոնողական առաջադրանքներն ու վարժությունները մատենական գեղանկարչության արվեստի ուսուցման գործընթացում առավել արդյունավետ են դարձնում ուսանողների գեղանկարչական կարողությունների ու հմտությունների զարգացումը՝ նրանց մոտ ձևավորելով ու զարգացնելով գեղանկարչական տեսողությունն ու գեղարվեստական մտածողությունը, երևակայությունը, երևույթի և պատկերի ավելի խոր ներըմբռնումը, զգայական, ստեղծագործական ընկալումը, գեղարվեստական մտածողությունը և գունազգացությունը:

- Մատենական գեղանկարչության ուսուցման գործընթացի արդյունավետությունը, ուսանողների գեղանկարչական կարողությունների զարգացումն ապահովվում են առաջին հերթին մանկավարժի կողմից գույն կերտելու, գուներանգային անցումներ և դրանց հերթական, աստի-

ճանական շերտեր կառուցելու, գունային զամմա ստեղծելու բուն գործընթացի փուլային ցուցադրմամբ, ուսուցման փոխներգործուն մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

- Բուն ուսուցողական առաջադրանքի կատարման պահին՝ ուսանողի աշխատելու ընթացքում, սխալներն ու թերացումները մատնանշելն ու դրանց շտկումները մանկավարժի անմիջական բացատրությամբ առավել արդյունավետ են դարձնում կատարողական հմտությունների զարգացումը:

- Արդյունավետ են նաև ուսուցման միջոցների՝ գրքերի, ալբոմների, գրքույկների, գունավոր վերասպությունների օգտագործումը, որոնք ուսումնական գլխավոր նմուշներն ու գիտելիքի աղբյուրն են մատենական գեղանկարչության ուսուցման ընթացքում: Օգտակար են բուն ձեռագիր բնօրինակների՝ ընդօրինակության լավագույն նախօրինակների ուսումնասիրությունները ձեռագրատներում, թանգարաններում:

- Կիրառելի և արդյունավետ կարող են լինել նաև անցյալի վարպետների ստեղծած մանրանկարներում նրանց կիրառած գեղանկարչական մեթոդների՝ էլեկտրոնային, լուսարձակման սարքավորումներով ցուցադրություններն ու բացատրությունները:

### **Գրականություն**

1. Գևորգյան Ա., Ինչպես էին նկարագարվում ձեռագրերը // Բանբեր Երևանի համալսարանի, Առանձնատիպ N2(74), Երևան, 1991, էջ 68:
2. Դուռնովո Լ., Հայկական մանրանկարչություն, Երևան, 1969, էջ 14:
3. Հարությունյան Ա., Ներկերը և թանաքները հին հայկական ձեռագրերում, Երևան, 1941, էջ 6:

## Методические указания по обучению искусства миниатюр рукописей

*Лилит Амирджанян*

### Резюме

*Ключевые слова:* принципы миниатюры, живописные знания, исполнительская техника, искусство раскрашивания, переходы цветовых оттенков, цветовая гамма, упражнения, технико-технологические методы

В статье представлены методы и технические возможности передачи традиционного, векового опыта исполнительской техники и искусства армянских миниатюр рукописей. Отмечается, что, несмотря на наличие особенностей различных миниатюрных школ, принципы армянской средневековой миниатюры, техника, методы в основном являлись общими для скрипториев различных регионов, провинций, даже для диаспоры и были под влиянием двух основных направлений – Васпуракана, которое считается народным, и Киликии, которое называется дворцовым или дворянским. Представлены технико-технологические средства, методы, проблемы копирования классической миниатюры и способы решения последних. Описаны технические особенности, характерные для сухой техники акварели, методы копирования миниатюр, способы создания и обработки живописи и цветовой гаммы.

Даны критерии наилучшего овладения исполнительской техникой искусства миниатюр рукописей. В заключении представлены предлагаемые автором эффективные методы и технико-технологические способы обучения и развития творческих способностей и исполнительских навыков новичков и студентов в искусстве миниатюр рукописей. В частности предлагается: в процессе обучения самостоятельно, а также посредством помощи, представлений и объяснений педагога постоянно выполнять художественные практические упражнения и делать попытки создания самых различных цветовых нюансов, живописных этюдов, творческих разнообразных заданий.



# Methodological Instructions for Teaching Manuscript Illumination

*Lilit Amirjanyan*

## Summary

*Key words: principles of miniature painting, knowledge of painting, executional technique, art of coloring, gradational color hues, gamut, exercises, technical-technological methods*

The article presents the methods and means of transferring the ancient, traditional experience of the executive technique and art of Armenian manuscript illumination. The author commemorates, that despite the existence of various characteristic workshops, the principles, technical methods were mainly common for the scriptoria in different regions, districts, provinces of ancient Armenia and even in diaspora, and bore the influence of two main trends – Vaspurakan regarded as popular, and Cilician as noble. The technical-technological means, methods, problems of classical miniature painting and ways of their solution are also depicted. The technical characteristics of dry watercolor painting, the methods of copying classical miniature, the modes of creating and developing color painting, gamut are described.

The criteria of the best mastering the executional technique of manuscript illumination are also rendered. In conclusion effective methods and technical-technological means, suggested by the author for teaching the rookies and students to develop their creative abilities and executional skills in the art of manuscript illumination, are represented. In particular, it is proposed: during the process of learning independently, as well as with the assistance, explanations of the teacher, constantly perform artistic, practical exercises and experiments of creating a variety of gradational color hues, coloring practices (studies), various creative tasks.

Ներկայացվել է 04.10.2021 թ.

Գրախոսվել է 11.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.